



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 15 » 02 2021թ.

№ 08/ԼԱ/ - 62

Փետրվարի 8-14-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Փետրվարի 9-ի ցերեկը առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը Ամբերդում, Գյումրիում, Աշտարակում, Եղվարդում, Արտաշատում կազմել է 2մմ, մնացած շրջաններում՝ մինչև 1մմ քանակությամբ: Փետրվարի 8-ին, 9-ի գիշերը, 10-14-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը փետրվարի 8-ին, 12-ին նորմայից բարձր է եղել 5-9, 9-10-ին, 13-ին՝ 7-10, 11-ին՝ 8-11, 14-ին՝ 6-10 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Տավուշում, Սյունիքում գրանցվել է +16...+21°C (Կապանում՝ +22°C, Սիսիանում՝ +12°C), Լոռիում, Արարատյան դաշտում՝ +13...+18°C, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում՝ +10...+14°C (Արենիում՝ +17°C), Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ +4...+9 (Հրազդանում՝ +10°C) աստիճան տաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Շիրակում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում գրանցվել է -5...-10°C (Աշոցքում՝ -16°C, Ֆանտանում՝ -4°C), Գեղարքունիքում՝ -2...-6°C (Մասրիկում՝ -15°C, Գավառում՝ -8°C), Լոռիում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում՝ -1...-3°C, Տավուշում, Արարատյան դաշտում՝ -4...+1°C (Արմավիրում՝ -6°C), Սյունիքում՝ +1...+4°C (Սիսիանում՝ -7°C):

Շաբաթվա ընթացքում դիտվել է քամի հջևանում, Ստեփանավանում, Արթիկում, Ծաղկահովիտում, Մեղրիում, Գորիսում՝ 5-15մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 16-21մ/վրկ, Պուլկինի լ/ք-ում՝ 16-19մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 21-28մ/վրկ (փետրվարի 8-ին՝ 25մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 31մ/վրկ) արագությամբ:

Փետրվարի 14-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձրլեռնային կայանում 91սմ, Որոտանի լք-ում՝ 64սմ, Ամբերդում՝ 52սմ, Ջերմուկում՝ 37սմ, Անանուն լք-ում՝ 36սմ, Ապարան լճայինում՝ 29սմ, Հրազդանում՝ 27սմ, Աշոցքում՝ 24սմ, Ամասիայում՝ 20սմ, Մասրիկում՝ 13սմ, մնացած շրջաններում՝ 1-10սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:
Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝
1900.53մ (14.02.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 10 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար

Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գագիկ Մուրեկյան
Հեռ.՝ 012 31 79 29